«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	*Ֆրանսիական դիվանագիտության մեջ հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի վերաբերյալ լրացուցիչ նյութերի ուսուցումը դպրոցական պատմության դասընթացում*
ԱՌԱՐԿԱ՝	*Պատմություն*
ՀԵՂԻՆԱԿ՝	*Ղուկասյան Մեղա*
ՄԱՐԶ՝	*Լոռի*
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝	*Վանաձորի թիվ 27 հիմնական դպրոց*
ՂԵԿԱՎԱՐ՝	*Մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր Ա. Ծատուրյան*

Վանաձոր 2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Սփյուռքի դերակատարումը Ֆրանսիայում Հայոց ցեասպանու- թյան ճանաչման գործում ----------5

Ֆրանսիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը----------6

Թուրքական կողմի դիրքորոշումը Ֆրանսիայի հայանպաստ դիրքորոշման վերաբերյալ----------11

Եզրակացություն----------13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանության ճանաչումը էական մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի համար, որը պատմական արդարությունը վերականգնելու, հայոց պահանջատիրությունը բավարարելու և նմանատիպ միջազգային հանցագործությունները կանխելու և հատուցելու մեծ հնարավորություն է: XX դարի առաջին միջազգային մեծ հանցագործությունը ճանաչվել և դատապարտվել է ինչպես միջազգային մի շարք կառույցների (ՄԱԿ..), այնպես էլ մի շարք երկրների կողմից (Ուրուգվայ, Արգենտինա, Ֆրանսիա..):

ԵՎ թվում է, թե 21-րդ դարում հնարավոր չէ նմանատիպ ոճիրի կրկնությունը:

Սակայն 44-օրյա պատերազմն ու թուրք-ադրբեջանական հակահայկական դիրքո - րոշումը և համաշխարհային հանրության անտարբերությունը ևս մեկ անգամ ապա - ցուցեց, որ աշխարհն առաջնորդվում է սեփական շահերով և կատարյալ անտարբեր է փոքր կամ թույլ քաղաքականություն վարող պետությունների և նրանցում ապրող ժողովուրդների նկատմամբ: Հայկական հարցի միջազգայնացումը եվրոպական գերտերությունները, կամ այսպես կոչված առաջադեմ հանրությունը օգտագործում էր ի նպաստ իր շահերի և, Թուրքիայից հերթական զիջումներն ստանալուց հետո մոռանում էր հայկական հարցի մասին: Սակայն պետք է նշենք, որ ՀՀ անկախության հռչակումից հետո հայկական դիվանագիտությունը հստակ նպատակ էր դրել համաշխարհային հանրությանը ներկայացնել Հայոց ցեղասպանության իրական պատմությունը, լույս սփռել թուրք-ադրբեջանական աղավաղած պատմության և պատմական արդարության վերականգնման ուղղությամբ:

Եթե առաջադեմ մարդկությունը ակտիվորեն դատապարտում էր հայոց ցեղաս-պանությունը, պահանջում էր պատժել իրական հանցագործներին և թեկուզ վերականգնել ու փոխհատուցել հայ ժողովրդի կրած նյութական վնասները, սակայն դրան հակառակ մեծ տերությունները լռում էին:

Դրությունը փոխվեց, սկսած 20-րդ դարի երկրորդ կեսից և հատկապես Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումից հետո, երբ մի շարք երկրներ ճանաչեցին, դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը: Ֆրանսիայի Հանրապետությունը այն

երկրներից մեկն է, որ 1990-ական թթ. վերջերից սկսած մի շարք բանաձևեր ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարման վերաբերյալ:

Շատ կարևոր է նաև դպրոցում ուսումնասիրել այս գործընթացը, այս և նմանատիպ թեմաներին տրամադրել լրացուցիչ դասաժամեր, քանի որ 8-րդ և 9-րդ դասարա-ներում Հայոց եղեռնին և նրա ճանաչման գործընթացին հատկացված ժամաքանակները բավարար չեն, ուստի կարելի է լրացուցիչ դասաժամեր հատկացնել, կամ աշակերտներին հանձնարարել հետազոտական աշխա-տանքներ, կամ նախագծեր Հայոց ցեղասպանության ճա- նաչման գործընթացի վերաբերյալ, որը երեխաների մոտ կբարձրացնի հայրենասիրական նկրտումները, կզարգաց նի վերլուծական մտածողություն, հնարավորություն կտա կատարել եզրահանգումներ և հասկանալ, որ յուրաքանչյուր վատ արարքի կամ հանցագործության համար կա հատուցում: Աշակերտներին կարելի է բաժանել հետազոտական խմբերի, տալ որոշակի հանձնարարականներ և համապատասխան գրականության ցանկ, որ նրանք իրենք կատարեն ուսումնասիրություններն ու իրենց աշխատանքի հիման վրա ձեռք բերեն համապատասխան գիտելիքներ, ձևավորեն իրենց դիրքորոշումը և արժեհամակարգը: Այս թեմայի ուսումնասիրությունը ապահովում է միջառարկայական կապ պատմության, աշխարհագրության, իրավունքի հետ և էլ ավելի արդյունավետ դարձնում աշխատանքը:

Ֆրանսիական դիվանագիտության այս հատվածին անդրադառնալու համար, դասարանը կարելի է բաժանել հետազոտական հետևյալ խմբերի.

_ Սփյուռքի դերակատարումը Ֆրանսիայում հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

_Ֆրանսիայի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

_Թուրքական կողմի դիրքորոշումը:

Այդ ամենը ամբողջացնելով նրանք կունենան հետևյալ պատկերացումն այդ թեմայի վերաբերյալ.

Սփյուռքի դերակատարումը Ֆրանսիայում Հայոց ցեասպանության ճանաչման գործում

Արտաքին քաղաքական հիմնախնդիրների և գերակայությունների շրջանակներում հայ- ֆրանսիական բարեկամական հարաբերությունները երկու երկրների բարեկամական հարաբերությունների ամուր հիմքն է հանդիսանում: Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդիրը ՀՀ քաղաքական օրակարգում է դեռևս 1990թվականից, որն ամրապնդվել է 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված <<Հայաստանի անկախության մասին>> հռչակագրի 11-րդ հոդվածում /1/, իսկ 1998 թվականին դարձել է ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը, որում մեծ էր նաև Սփյուռքի ջանքերը: Տարեցտարի մեծանում էր հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ, որն էլ ուղեկցվում էր մի շարք երկրների կողմից պատմական այդ իրողության միջազգային ճանաչմանը և դատապարտմանը: Բացառություն չէր նաև Ֆրանսիայի Հանրապետությու- նը: Ինչպես հայտնի է, ցեղասպանության հետևանքով մոտավորապես 1,5 միլիոն հայ ոչնչացվել է, իսկ հրաշքով փրկվածները ցրվել են աշխարհի տարբեր երկրներ՝ համալրելով կամ ստեղծելով նոր գաղթօջախներ, հիմք դնելով հայկական սփյուռքին/2/:

Սփյուռքում ամենաազդեցիկներից մեկը դարձավ ֆրանսահայ համայնքը, իսկ Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը դարձավ ոչ միայն ՀՀ, այլև սփյուռքահայության քաղաքական օրակարգերից մեկը: Ֆրանսահայ համայնքը քայլեր ձեռնարկեց Հայոց ցեղասպանության մասին իրազեկվածության մակարդակը ֆրանսիական քաղաքական և հասարակական շրջանակներում բարձրացնելու համար և Ֆրանսիայի կողմից պատմական այդ իրողության ճանաչմանը հասնելու համար:

1965թ. Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի նախօրեին Ֆրանսիայում առաջինը կոմունիստները պահանջեցին անհապաղ ճանաչել այն և հայերին տալ փոխհատուցում/3/:

Դրանից ելնելով ֆրանսահայ համայնքը նախապատրաստական աշխատանքներ սկսեց և դարձավ այդ քաղաքական նախաձեռնության շարժիչ ուժերից մեկը: Ստեղծվեցին մի շարք լոբբիստական խմբեր, որոնց խնդիրն էր նպաստել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը: 1995 թվականին ստեղծվեց <<Ապրիլ 24>> կոմիտեն, որն իր շուրջը համախմբեց ֆրանսահայ հասարակական, քաղաքական, մշակութայինկազմակերպություններին՝ոգեկոչելու Ցեղասպանության տարելիցը և հասնել ֆրանսիական իշխանությունների կողմից նրա ճանաչմանը:

Ֆրանսիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը

Պետք է նշել որ դեռևս 1980-ական թթ. սկզբներին ֆրանսիական իշխանու- թյունները այդքան էլ հետաքրքրված չէին Հայոց ցեղասպանության խնդրով:

Հայոց ցեղասպանության ճանաչման սկզբնական փուլում կարևոր իրադարձություն էր 1984թ. ՖՀ նախագահ Ֆրանսուա Միտերանի հայտարարությունը, որտեղ նա անդրադարձել էր նաև Հայոց ցեղասպանության խնդրին՝ նշելով, որ դա անջնջելի հետք է թողել հայ ժողովրդի ճակատագրի վրա, ուստիև ցեղասպանությունը պետք է հիշվի մարդկության կողմից: Սա, փաստորեն, Հայոց ցեղասպանության վերաբերյալ

առաջին պաշտոնական հայտարարությունն էր ՖՀ նախագահի մակարդակով, որը կարելի է ասել սկզբնակետ հանդիսացավ հետագայի աշխույժ գործընթացների վրա, որոնք էլ հանգեցրին նրա կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչմանը:

Ֆ. Միտերանը դեռևս նախագահական ընտրությունների նախաշեմին, հանդես էր եկել հետևյալ կոչով. <<Հայկական հարցը անմիջականորեն վերաբերվում է ֆրանսիական պետությանը: Մենք պետք է պահանջենք, որպեսզի Ֆրանսիան ճանաչի 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը, և Հայկական հարցը ստանա արդարացի լուծում>>: Այսպիսով, ֆրանսիական իրականության մեջ նա ակտիվացնում է Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված քաղաքական արշավը: Սկզբնական շրջանում ֆրանսիական քաղաքական շրջանակները օգտագործում էին <<կոտորածներ>>, <<ջարդ>>,<<սպանդ և այլ բառեր՝ սկզբնապես խուսափելով օգտագործել <<ցեղասպանություն>> տերմինը: Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը բարձրացվել է 1985-1986թթ., ինչպես նաև 1988 թվականին, իսկ 1997 թվականի փետրվարին Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Պատրիկ Լաբոնը օրենքի նախագիծ է ներկայացնում՝ առաջարկելով ապրիլի 24-ը հայտարարել մարդկության դեմ ուղղված այս հանցագործության հիշատակի օր, նշելով, որ այդ օրը հարյուրավոր հայ մտավորականների աքսորել և մահապատժի են ենթարկել՝ ազդարարելով ցեղասպանության սկիզբը:

1998թ. մայիսի19-ին Ֆրանսիայի Ազգային ժողովին ներկայացվեց օրենքի նախագիծ <<1915 թվականի հայերի ցեղասպանության հրապարակայնորեն ճանաչման մասին>> անվանումով, որը միաձայն ընդունվեց մայիսի 29-ին:

Հայոց ցեղասպանության խնդիրը արծարծվեց նաև 1999թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական գրասենյակում <<Մարդկության դեմ գործած ոճիրների անպատժելիությունը>> թեմայով կայացած հանդիպմանը, որին մասնակցում էին ֆրանսիացի մի շարք գործիչներ:

1999 թ. ապրիլին ավելի քան 300 ֆրանսահայեր մասնակցեցին Լիոն-Փարիզ բողոքի արշավին՝ պահանջելով ֆրանսիական Սենատից Ազգային ժողովի օրինակով ճանաչել Հայոց ցեղասպանությունը: 2000թ. Նոյեմբերի 8-ին ֆրանսիական Սենատն ընդունեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ հերթական նախագիծը, որը 2001 թ.

հունվարին ուժի մեջ մտավ և ստորագրվեց նախագահ Ժակ Շիրակի կողմից և բովանդակային առումով որոշակի նմանություն ուներ 1998 թ. մայիսի որոշման հետ:
Շուտով նաև ֆրանսիական գիտական, մշակութային, հասարակական շրջա-նակների կողմից սկսեցին լայնորեն կիրառվել և քննարկվել Հայոց ցեղասպանության թեման, որի վերաբերյալ կատարվում էին ուսումնասիրություններ, կազմվում էին փաստաթղթեր և արխիվային նյութերի ժողովածուներ: Ամենուր ավելանում էին Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշարձանները: 2003 թ. ապրիլի 24-ին Փարիզի կենտրոնում տեղադրվեց քանդակագործ Դավիթ Երևանցու Կոմիտաս վարդապետի արձանը:
Հայոց ցեղասպանության վերաբերյալ հերթական օրենքը Ֆրանսիայում ընդունվեց 2001 թ., ըստ որի՝ <<Ֆրանսիան հրապարակավ ճանաչում է 1915թ.-ի Հայոց ցեղասպանությունը: Սույն օրենքը պետք է գործի որպես պետության օրենք>>:
2006թ. հոկտեմբերի 12-ին Ֆրանսիայի Ազգային ժողովն օրինագիծ ընդունեց, որով 1915թ. Հայոց ցեղասպանության ժխտումը հանդիսանում է քրեորեն պատժելի հանցագործություն: Ըստ փաստաթղթի հայերի զանգվածային սպանդի ժխտումը պատժվում է մեկ տարվա ազատազրկմամբ և 45000 եվրո տուգանքով:, բայց օրինագծի բովանդակության որոշակի հակասական և, ըստ էության, անորոշ փաստերի պատճառով ֆրանսիական Սենատի կողմից այն արգելափակվում է:
2007 թ. նախագահական ընտրություններում հաղթանակած Ն. Սարկոզին մինչև ընտրությունները ֆրանսահայ համայնքին խոստացել էր պաշտպանել Հայոց ցեղասպանության վերաբերյալ 2006թ. նախագիծը, սակայն հայանպաստ դիրքորոշմամբ հանդես եկավ միայն իր պաշտոնավարման վերջին շրջանում, քանի որ ֆրանսահայ ամենաազդեցիկ գործիչ, աշխարհահռչակ շանսոնիե Շ. Ազնավուրը ֆրանսահայության անունից հրապարակավ զգուշացրեց Ն. Սարկոզիին, որ կկորցնի 500000 ֆրանսահայերի աջակցությունը 2012թ. ընտրություններում:
2011թ. և 2012թ. Սենատը նորից քննարկեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախագիծը և 2012թ. հունվարի 23-ին այն ընդունեց, բայց Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը խոչընդոտեց նրա ուժի մեջ մտնելը:

2015թ.՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին Ֆրանսիայում ևս տեղի ունե- ցան հիշատակի միջոցառումներ, որոնց մասնակցում էին ֆրանսիական քաղաքա- կան վերնախավի ներկայացուցիչներ: 2015թ. ապրիլի 24-ին Ծիծառնակաբերդում Օլանդը հանդես եկավ ելույթով՝ խոսելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման անհրաժեշտության մասին: Արդեն 2016թ. հոկտեմբերի 14-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը ընդունեց օրենք, որով քրեականացվում են մարդկության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունները, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության հերքումը, վիճարկումը կամ նսեմացումը: Սակայն Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը 2017թ. հունվարին չեղարկել է այն:

Սրանից գալիս ենք այն եզրահանգման, որ վերոնշյալ կառույցը հերթական անգամ ոչ միայն ապաքրեականացնում է Հայոց ցեղասպանության իրողության ժխտումը, այլև կասկածի տակ է առնում պատմական այդ անհերքելի իրադար- ձության փաստը: Սրանից էլ պարզ է դառնում, որ անհաջողության էին մատնված ֆրանսիական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանությունը Թուրքիային ճանաչել ստիպելու քայլերը, այնպես էլ հայամետ դիրքորոշում ունեցող ֆրանսիացի գործիչների նախաձեռնությունները, որոնք փորձում էին անընդհատ քաղաքական օրակարգում պահել Հայոց ցեղասպանության հարցը: Ֆրանսահայ լոբբիստական կազմակերպությունները ևս շարունակում էին իրենց աշխատանքները այդ հարցը նորից օրակարգ բերելու գործում: Այս մասի Ֆրանսիայի Հայ դատի ատենապետ Հարութ Մարտիրոսյանը նշել է. <<Ակտիվ աշխատում ենք իրավաբանների հետ: Անպայման լուծում կգտնենք՝ հարցը կրկին օրակարգ բերելու համար: Սա միայն Հայ դատի խնդիր չէ, Ֆրանսիայում գործող հայկական կազմակերպություններն իրենց ջանքերն են ուղղում այս գործին>>:

2017 թվականի նախագահական ընտրություններից հետո ֆրանսահայ համայնքն էլ ավելի ակտիվացրեց իր քայլերը՝ նոր ակնկալիքներ ունենալով ֆրանսիական վարչակազ մից:

Իսկ ահա Էմանուել Մակրոնը 2018թվականի հունվարին կայացած Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհրդի ընդունելության ժամանակ իր ելույթում

Հայտարարել է, որ Հայոց ցեղասպանության օրը պետք է ներառվի Ֆրանսիայի Հանրապետության հիշարժան օրերի ցուցակում, հավելելով՝ <<Ֆրանսահայերի պատմու- թյունը Ֆրանսիայի պատմությունն է: Եվ քանի որ Հայոց ցեղասպանությունը մեր հիշո- ղությունների մասն է կազմում, ապա Հայոց ցեղասպանության հիշատակը պետք էհարգվի նաև մեր հանրապետությունում: Ձեզ հետ միասին ես նույնպես ուժերիս ներածին չափով կպայքարեմ ժխտման ցանկացած դրսևորման դեմ, որն անարգում է զոհերի հիշա- տակն ու ողջերի արժանապատվությունը>>: Պետք է նշել, որ նախագահական ընտրու- թյունների երկրորդ փուլում հաղթանակ տանելու դեպքում Մակրոնը խոսռացել էր շա- րունակել պայքարը Հայոց ցեղասպանության լիակատար միջազգային ճանաչման հա- մար, և պատահական չէր, որ նա այդ արշավը ցանկանում էր սկսել հենց Ֆրանսիայից՝ ակտիվորեն աջակցելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված քայլերին: 2018 թ. հոկտեմբերին, նախագահ Է. Մակրոնը պետական այց կատարեց ՀՀ՝ մասնակցելու Երևանում անցկացվող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթնաժողովին, նույն օրը Ծիծառնակաբերդում հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Է. Մակրոնի իրականացրած կարևորագույն քայլերից էր 2019 թ. փետրվարի 5-ին Ֆրան- սիայում ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր հռչակելու մասին արված հայտարարությունը Ֆրանսիայում հայկական ընկերությունները համակարգող խորհրդի կազմակերպած ամենամյա ընթրիքի ժամանակ՝ նշելով, որ Ֆրանսիան 1915թ. Ի վեր ցե- ղասպանությունն անվանում է հանցագործություն մարդկության ու քաղաքակրթության դեմ: Նախագահ Է. Մակրոնը 2019թ. ապրիլի 10-ին ստորագրեց ապրիլի 24-ը Հայոց ցեղաս- պանության հիշատակի ազգային օր ճանաչելու մասին հրամանագիրը, որտեղ ասվում է՝ 1915 թ. Հայերի ցեղասպանության հիշատակման օր սահմանել ապրիլի 24-ը: Ըստ հրամա- նագրի՝ ամեն տարի այդ օրը Փարիզում կանցկացվի միջոցառում: Նմանատիպ միջոցա-

ռումներ կարող են կազմակերպվել նաև այլ քաղաքներում, յուրաքանչյուր դեպարտամենտում՝ համայնքային ղեկավարության նախաձեռնությամբ: Այս որոշման կատարման համար պատասխանատու է Ֆրանսիայի վարչապետը:

Թուրքական կողմի դիրքորոշումը Ֆրանսիայի հայանպաստ դիրքորոշման վերաբերյալ

Այժմ անդրադառնանք Թուրքիայի դիրքորոշմանը Ֆրանսիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին: Ինչպես արդեն նախօրոք նշվել էր 1998 թ. մայիսի 29-ին ըն- դունված <<1915 թվականի հայերի ցեղասպանության հրապարակայնորեն ճանաչման մասին>> օրենքը միանշանակորեն չընդունվեց հայկական և թուրքական պետական շրջանակների կողմից: Եթե Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն ճանաչման փաս տը մեծ խանդավառությամբ ընդունվեց Հայաստանի Հանրապետությունում, ապա թուր- քական իշխանությունների կողմից այն ընդունվեց քննադատորեն, որոնք բազմաթիվ հայտարարություններով մեղադրեցին ֆրանսիացի պատգամավորներին, թե իրենց քայլն առաջին հերթին ուղղված է հայ-թուրքական բարեկամական հարաբերությունների ապագայի դեմ: Պետք է փաստել նաև, որ Հայոց ցեղասպանության հարցը և ֆրանսիական քաղաքական շրջանակների դիրքորոշումը այս հարցում մշտապես քննադատվել է թուրքական կառավարող շրջանակների կողմից:

Ֆրանս-թուրքական հարաբերությունների վրա նմանօրինակ ազդեցություն թողեց նաև 2003 թվականի ապրիլի 24-ին Փարիզում տեղադրված Դավիթ Երևանցու՝ << Երգահան Կոմիտասի և 1915 թվականին Օսմանյան կայսրությունում իրականացված 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ մեկուկես միլիոն հայերի հիշատակին>> մակագրությամբ Կոմիտաս վարդապետի արձանը: Թուրքական կողմի սպառնալիքները հաճախ հասնում էին աննախադեպ չափերի՝ փորձելով կասեցնել ֆրանսիական իշխանությունների հայանպաստ քայլերը նչեզոքացնել նրանց

հայամետ դիրքորոշումները: Թուրքական կողմը նախևառաջ սպառնում էր դադարեցնել ֆրանս-թուրքական հանագործակցությունը ինչպես քաղաքական, այմպես էլ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող և փոխշահավետ առևտրատնտեսական ոլորտում: Սակայն պետք է նշել, որ այս ամենը միանշանակ չէր, որովհետև ինչպես ակներև դարձավ հետագայում, դրանք ընդամենը սպառնալիքներ էին, իսկ երկկողմ փոխշահավետ առևտրատնտեսական հարաբերությունները շարունակում էին նույն տեմպով ընթանալ և ժամանակի ընթացքում այդ հարաբերությունները էլ ավելի ընդլայնվեցին:

Ֆրանսիական իշխանությունները, հաշվի առնելով ֆրանս-թուրքական հարաբերությունների նշանակությունը, միաժամանակ չէին կարող հաշվի չառնել նաև բազմամարդ ֆրանսահայ համայնքիդերը, քանի որ այդ համայնքը բավակին ազդեցիկ ընտրազանդված էր և նրա քաղաքական կշիռը նույնպես կարևորագույն նշանակություն կարող էր ունենալ հետագա քաղաքական գործընթացներում և իրադարձություններում:

Ֆրանսահայ համայքի ծավալած ակտիվ գործունեությունից բացի՝ հայանպաստ դիրքորոշումների ամրապնդման գործում կարևոր նշանակություն ունեցան հայ-ֆրանսիական երկկողմ փոխայցելությունները, որոնց օրակարգում մշտապես առկա էր Հայոց ցեղասպանության խնդիրը: Իսկ ահա Հայոց ցեղասպանության ժխտողաանության մեծ արշավը, որ ծավալվեց 2000-ական թվականներին, ստանում էր Թուրքիայի անմիջական հովանավորությունը և ահա 2006 թվականին թուրքական կառավարությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարը հռչակեց երկրի արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը:

Այսպիսով թուրքական իշխանությունները և հայատյաց դիրքորոշմամբ թուրքական հասարակությունը փորձում են հերքել և խեղաթյուրել պատմական իրողությունը և մնալ անպատիժ իրենց նախնիների կողմից իրականցված հանցագործության համար, որն ուղղված է համայն մարդկության դեմ և դրա հերքումը կամ անտեսումը կհանգեցնի նմանատիպ հանցագործությունների կրկնման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս ամենից կարելի է գալ այն եզրահանգման, որ հայ-ֆրանսիական հարաբերությունները հիմնված են երկու երկրների արտաքին քաղաքականության հիմնախնդիրների շուրջ երկկողմ համագործակցության վրա: Հայ-ֆրանսիական հարաբերությունների օրակարգում էր Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դատապարտմանն ուղղված ինչպես ՀՀ, այնպես էլ սփյուռքահայության ջանքերը: Հայոց ցեղասպանության խնդիրը ամենա- տարբեր մակարդակներով և նախաձեռնություններով ներկայացվել է ֆրանսիական իրականության մեջ, որը ներկայացվել է ինչպես ֆրանսահայ կազմակերպությունների, այնպես էլ ազդեցիկ քաղաքական գործիչների կողմից, ինչն էլ նպաստել է որ Ֆրանսիայի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչի Հայոց ցեղասպանությունը և օրինակ դառնա մյուս երկրների համար: Հայոց ցեղասպանության մասին ելույթներով հանդես են եկել ֆրանսիական բարջրաստիչան պաշտոնյաները, երկրի նախագահները, որը բխում էր և՛ այդ երկրի շահերից, և՛ ֆրանսահայ համայնքի սեփական քաղաքական հետաքրքրություն ներին հետամուտ լինելով: Ուստի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման, արդար պահանջատիրության գործընթացում իրենց կարևորագույն նշա- նակությունն ունեն հայ-ֆրանսիական հարաբերությունների համատեքստում փոխշահա- վետ համագործակցության արդյունքում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման վերաբերյալ ձեռք բերած հաջողությունները, որոնք իրենց նշանակալի դերը կունենան Հայ դատի արդարացի լուծման և պատմական արդարության վերականգնման գործում:

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընաթացը Ֆրանսիայի օրինակով ներկայացնելով, հասկանում ենք որ այն ունի մի շարք բացթողումներ ու թերություններ, և քանի դեռ Հայոց ցեղասպանության ճանաչումը չի ստացել համամարդկային բնույթ ու այն չի ստացել իր հատուցումը: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր պայքար սկսվում է ամենափոքր ձեռքբերումներից, և հաճախակի անհավանական թվացող ցանկացած քայլ սկիզբն է ավելի մեծ ու էական

ձեռքբերումների: Ամեն մեծ գործի սկիզբը փոքր անէական թվացող քայլերն են, իսկ ցեղասպանության ճանաչմանը հասնելու նպատակը ոչ թե հային խղճալն ու կարեկցելն է, այլ պատմական արդարությունը վերականգնելը և գալիք սերունդներին իրենց զոհված նախնիների փոխարեն արդար հատուցումը: Ապագա քաղաքացուն, երկրի կերտողին այն հնարավորություն է տալիս նաև հասկանալ, որ պահանջն ու համախմբվածությունը կբերեն ցանկալի հանգուցալուծման և արդար հատուցման :Իսկ այդ պայքարի վառ օրինակը մի շարք երկրների և միջազգային կառույցների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումն է:

Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրները.

ԱՄՆ, Ավստրիա , Արգենտինա, Բելգիա, Բոլիվիա, Բրազիլիա,

Բուլղարիա, Գերմանիա, Դանիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա,

Լեհաստան, Լիբանա ն, Լիբիա, Լյուքսեմբուրգ, Կանադա,

Կիպրոս, Հունաստան, Նիդերլանդներ, Շվեդիա, Շվեյցարիա,

Չեխիա, Չիլի, Պարագվայ, Պորտուգալիա, Ռուսաստան,

Սիրիա, Սլովակիա, Սլովենիա, Վատիկան, «Սուրբ Աթոռ»,

Վենեսուելա, Ուրուգվայ, Օսմանյան կայսրություն, Ֆրանսիա:

Կազմակերպությունները.

Հայոց ցեղասպանությունն ընդունել են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Եվրոպայի Խորհուրդը , Եվրախորհրդարանը,ՄԱԿ-ի մի քանի հանձնաժողովներ , Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, Եվրոպական միություն, Արդարադատության միջազգային կենտրոն, Ցեղասպանագետների միջազգային

ընկերակցություն, Մարդու իրավունքների միացյալ հանձնախումբ, Ամերիկայի հրեական համայնքների միություն։

2016 թվականի ապրիլի 15-ին Եվրախորհրդարանը 554 կողմ ձայնով բանաձև ընդունեց, որով կոչ էր անում Թուրքիային ընդունել Հայոց ցեղասպանությունը և վերահաստատեց 1987 թվականի ընդունած բանաձևը, որով 1915-1917 թվականներին Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրականացվածը ճանաչվել էր ցեղասպանություն՝ ՄԱԿ-ի՝ ցեղասպանության մասին 1948 թվականի կոնվենցիայի դրույթների համապատասխան։

Հռոմի պապ Ֆրանցիսկոսը 2015 թվականի ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված պատարագի ժամանակ օգտագործեց «ցեղասպ*անություն*» եզրույթը։

Այս նույն ձևով կարելի է ուսումնասիրել նաև ցանկացած այլ երկրի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը և ամբողջացնել այդ գործընթացի վերաբերյալ պատկերացումները։

Գրականության ցանկ

1.https://www.gov.am/am/independence/

2.Սվազլյան Վ., Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը, Երևան, 2003

3.Հայկական հարցը Ֆրանսիայի արտաքին քաղաքակա- նության օրակարգում https://www.gov.am/am/independence/16.06. 2011թ

4. Կարապետյան Ա., Հայոց ցեղասպանության ճանաչ-ման գործընթացը Ֆրանսիայի Հանրապետությունում, Բանբեր Երևանի համալսարանի, 137. 6 Եր., 2012

5.Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում,(կազմող Քոչարյան Վ.), Եր.,2014:

6. Ֆ. Օլանդը Երևանում կլինի ապրիլի 23-ի երեկոյան, 20.04.2015, URL:https://artsakhpress.am/armnews/17003/ fransua-olland-pribudet-v-erevan-vecherom-23%C2%AC-go-aprelya.html/(Հղումը՝ 14.03.2019):

7.URL:https:armenpress.am/arm/news/919498/(Հղումը՝ 14.03.2019):

8.https://hy.wikipedia.org/wiki/Հայոց_ցեղսպանության_ճանաչում